Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.
Թամար Ալեքսանյան
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության
Ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչության պետ

Գործուղման վայրը և ժամկետները.
ք. Ստրասբուրգ (Ֆրանսիայի Հանրապետություն), 2026թ. մարտի 17-20

Հրավիրող կողմը.
Եվրոպայի խորհուրդ (ԵԽ)

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Եվրոպայի խորհրդի Կրթության ղեկավար հանձնաժողովի (Steering Committee for Education, CDEDU) 9-րդ նիստին:

Քննարկված թեմաները.
Քննարկվել են ԵԽ-ի կրթության վարչության կողմից 2025 թվականին իրականացված աշխատանքները, որոնց հիմքում «Learners First» կրթության ոլորտի 2024-2030 թվականների ռազմավարությունն է: Վերջինիս նպատակն է կրթությունը հռչակել որպես ազատ, ներառական և դիմակայուն հասարակության հիմնաքար: Այս համատեքստում կարևորվել են ռազմավարության 3 փոխկապակցված առաջնահերթությունները՝ ժողովրդավարական և քաղաքացիական կրթության արդիականացումը, սոցիալական պատասխանատվության և արձագանքման ապահովումը, մարդու իրավունքների վրա հիմնված թվային վերափոխումը: Ներկայացվել են քաղաքացիական կրթությանը, բուհերի ակադեմիական ազատությանն ու բարեվարքությանը, արհեստական բանականությանը, թվային քաղաքացիական կրթությանը, լեզվական քաղաքականությանը վերաբերող հարցեր: Շեշտադրվել է կրթության ոլորտում ներդրումներ անելու նշանակությունը ժողովրդավարական ապագայի կառուցման համատեքստում:

Ներկայացվել են նաև 2025 թվականին ԵԽ-ի հետ իրականացված երկկողմ ծրագրերը, մասնավորապես՝ ժողովրդավարական և քաղաքացիական կրթության, որակյալ ու ներառական

կրթության, դպրոցներում բռնության և բուլինգի կանխարգելման, սովորողների մասնակցայնության և նրանց ձայնի լսելիության, էթիկայի և բարեվարքության, թվային քաղաքացիական կրթության, լեզվական քաղաքականության, պատմության դասավանդման ուղղություններով:

Ներկայացվել է կրթության ոլորտում գենդերային հավասարության գնահատման արդյունքների քարտի (scorecard) նախագիծը, որով պիլոտային գնահատումը նախատեսվում է իրականացնել ընթացիկ տարվա հոկտեմբերից երկու մակարդակում՝ քաղաքականության և ուսումնական հաստատությունների:

Քննարկվել են 2026 թվականի դեկտեմբերին Մոնտենեգրոյում կայանալիք նախարարական համաժողովի հայեցակարգը և նախնական օրակարգը: Համաժողովի թեմատիկ ուղղություններն են լինելու ԵԽ-ի «Learners First» կրթության ոլորտի 2024-2030 թվականների ռազմավարության իրագործումը և դրա առաջընթացը, բուհերի ակադեմիական ազատության պաշտպանությունը, Քաղաքացիական կրթության եվրոպական տարածք գործիքը, թվային ժամանակաշրջանում ուսուցչի մասնագիտության հեռանկարները, ինչպես նաև՝ ԵԽ-ի և երկրների ազգային ռազմավարությունների փոխկապակցվածությունները Կայուն զարգացման 4-րդ նպատակի օրակարգի իրագործման համատեքստում, այդ թվում՝ 2030 թվականից հետո:

Ընդգծվել է նաև համաժողովին երիտասարդների ներգրավվածության կարևորությունը (օրինակ երիտասարդ ուսուցիչների մակարդակով):

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Առանձին հանդիպում է տեղի ունեցել ԵԽ Կրթության վարչության Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության բաժնի ներկայացուցիչների հետ, որի ժամանակ քննարկվել են ՀՀ-ԵԽ երկկողմ ծրագրի իրականացման հնարավորությանը վերաբերող հարցեր:

2025 թվականին նման երկկողմ ծրագրեր ԵԽ-ն իրականացրել է 8 երկրի հետ (Վրաստան, Մոլդովա, Թուրքիա, Սերբիա, Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Հյուսիսային Մակեդոնիա) կրթության բոլոր մակարդակներում, ընդհանուր 16 մլն եվրո արժողությամբ: Նշված երկկողմ ծրագրերը ներառել են կրթության ազգային ռազմավարությունների մշակման/իրականացման, քաղաքականության առաջարկությունների, ինչպես նաև՝ ճանապարհային քարտեզների, կրթության չափորոշիչների, մեթոդաբանությունների և ուղեցույցների մշակման աշխատանքներ: Ծրագրերի մյուս ուղղությունը կարողությունների զարգացումն է կրթության ոլորտի բոլոր շահառուների համար: Աշխատանքներ են իրականացվել նաև ուսումնական նյութերի մշակման և տարածման, ժողովրդավարական կրթության միջոցառումների կազմակերպման, փոխուսուցման ձևաչափերով:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ԵԽ գործընկերները կուղարկեն երկկողմ ծրագրերի իրականացման վերաբերյալ տեղեկություն, որն ուսումնասիրելուց հետո, ըստ նպատակահարմարության, նախարարությունը կարող է հանդես գալ համագործակցության առաջարկությամբ:

Առանձին զրույց է տեղի ունեցել նաև Ռումինիայի ներկայացուցչի հետ կրթության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ՝ PISA-2025 գնահատման ծրագրի ազգային զեկույցի շրջանակում վերջինիս որպես հնարավոր բենչմարք երկիր դիտարկելու համատեքստում:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նիստի ընթացում մասնակցային քննարկումների արդյունքում հաստատվել և հավանության են արժանացել մի շարք մեթոդաբանական և ուղղորդիչ փաստաթղթեր, մասնավորապես.

Հաստատվել են հետևյալ փաստաթղթերը՝

- Թվային ժամանակաշրջանում պատմության դասավանդման առաջարկությունների փաստաթուղթը,
- Արհեստական բանականության գրագիտության առաջարկությունների փաստաթուղթը:

Հավանության են արժանացել հետևյալ փաստաթղթերը՝

- Թվային քաղաքացիական կրթության 2027-2031 թվականների ճանապարհային քարտեզի նախագիծը, որը հաստատման կներկայացվի հանձնաժողովի հաջորդ՝ 10-րդ նիստում,
- Թվային ժամանակաշրջանում ուսուցչի մասնագիտության հեռանկարների փաստաթղթի բովանդակության նախագիծը, որի զրոյական նախագիծը պատրաստ կլինի ընթացիկ տարվա հունիսին,
- «Քաղաքացիական կրթության եվրոպական տարածք» գործիքի լրամշակումները,
- Լեզուների դասավանդման 2026 և 2027 թվականների միջկառավարական ծրագիրը,
- Մասնագիտական կրթության և ուսուցման մակարդակում ժողովրդավարական կրթության փաստաթղթի մշակման առաջարկությունը,
- ԵԽ-ի՝ Եվրոպայում բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման թափանցիկ և որակյալ ապահովման կոնվենցիայի մշակման կառուցվածքի և ժամանակացույցի առաջարկությունը,
- ԵԽ-ի Սովորողների իրավունքների կանոնադրության հայեցակարգը,
- Ակադեմիական ազատության իրավական պաշտպանության հաշվետվության պատրաստման առաջարկությունը. հաշվետվությունը նախատեսվում է ներկայացնել 2026թ. դեկտեմբերին Մոնտենեգրոյում կայանալիք նախարարական համաժողովին,
- Ռոմանական բազմալեզու քաղաքականության հաշվետվությունը, այդ լեզուները դասավանդող մանկավարժների և քաղաքականության վերանայված ուղեցույցները. վերջիններս կարող են կիրառելի լինել նաև այլ երկրների կողմից ազգային փոքրամասնությունների լեզուների դասավանդման համատեքստում:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկում եմ ՀՀ ԿԳՄՍՆ կրթության ոլորտի վարչությունների և Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոնի ներկայացուցիչների հետ ուսումնասիրել ԵԽ-ի կողմից իրականացված երկկողմ ծրագրերը և քննարկել ՀՀ-ԵԽ 2027-2030 թվականների գործողությունների ծրագրում (որն այս պահին մշակման փուլում է) նման ծրագիր ներառելու նպատակահարմարությունը և հնարավորությունը:

Ամսաթիվը, ստորագրությունը

Թամար Ալեքսանյան

25 մարտի 2026թ.